№ 143 ԵՐԵՔՇԱԲԹԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 12 **1895** ԵՐԵՔՇԱԲԹԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 12 № 143

ՔՍԱՆԵՐԵՔԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 բուբլի, կէս տարվանը 6 բուբ.
Առանձին համարները 7 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ. Редакція «Мшакъ».
Կամ Tiflis. Rédaction «Mschak».
Տելեֆոն № 253.

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.

Տելեֆոն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԱՌԱՋԻԿԱՅ **1896** ԹԻԱԿԱՆԻՆ

24-ՐԴ ՏԱՐԻ **„ՄՇԱԿ“** 24-ՐԴ ՏԱՐԻ

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

կը հրատարակվի Թիֆլիսում, նոյն դիրքով, նոյն պրոգրամայով և նոյն ուղղութեամբ։ Մենք սահմանում ենք սեփական հեռագիրներ։

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԲԱՑՎԱԾ Է

«ՄՇԱԿԻ» տարեկան գինը թէ Ռուսաստանում և թէ արտասահմանում 10 բուբլի է, տասն և մէկ և տասն ամսվանը՝ 9 բ., ինն և ութ ամսվանը՝ 8 բ., եօթ ամսվանը՝ 7 բ., վեց ամսվանը 6 բ., հինգ ամսվանը՝ 5 բ., չորս ամսվանը՝ 4 բ., երեք ամսվանը՝ 3 բ., երկու ամսվանը 2 բ., մի ամսվանը՝ 1 բուբլի։

«ՄՇԱԿԻՆ» գրվել կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ (Բազարնայա և Բարօնսկայա փողոցների անկիւն)։ Կայսրութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻՆ» գրվելու համար, և առհասարակ նամակներ և ծրարներ ուղարկելիս, պէտք է դիմել հետևեալ հասցէով. ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ», իսկ արտասահմանից՝ Tiflis, Rédaction du journal arménien «MSCHAK».

ОТКРЫТА ПОДПИСКА НА **1896** ГОДЪ
НА ЕЖЕДНЕВНУЮ ГАЗЕТУ

„НОВОЕ ОБОЗРѢНІЕ“

(тринадцатый годъ изданія)

Въ 1896 г. «Новое Обозрѣніе» будетъ выходить въ Тифлисѣ, какъ и въ прошлые годы, ежедневно, по программѣ газеты литературной, общественной и политической, **но въ увеличенномъ форматѣ.**

Плата остается прежняя: съ пересылкою и доставкою: на годъ—10 р., на полгода—6 р., на три мѣсяца—3 р. 50 к., на одинъ мѣсяцъ—1 р. 50 к. За границу: на годъ—17 р., на полгода—9 р., на три мѣсяца—5 р. (Подписка принимается не иначе, какъ считая съ перваго числа любого мѣсяца). Для сельскихъ учителей и благотворительныхъ учрежденій **плата пониженная:** на годъ—7 р., на полгода—4 руб.

Для годовыхъ подписчиковъ, какъ городскихъ, такъ и иногородныхъ, обращающихся непосредственно въ контору редакціи, допускается разсрочка, на слѣдующихъ условіяхъ: при подпискѣ вносится—3 р., къ 1-му марта—2 р., къ 1-му мая—3 р. и къ 1-му сентября—2 р.

Подписка и объявленія принимаются Въ Тифлисѣ: въ конторѣ газеты, Барятинская ул., № 8.

Иногородные адресуютъ свои требованія: **Въ Тифлисъ, въ редакцію «Новаго Обозрѣнія».**

Лица, подписавшіяся (безъ разсрочки) на годовое изданіе «Новаго Обозрѣнія» 1896 г. въ настоящее время, будутъ безплатно получать газету въ текущемъ году со дня подписки.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Դատարկ խոստումն. Հեռագիրներ. Օրվայ հարցը. — ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Արդիւնագործութեան վրա գրվող հարկը. «Խաարի իշխանութիւնը». Նամակ Խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Հայոց հարցը և դիպլօմատիան. Նամակ Թիւրքիայից.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ԲՕՐՍԱ.—ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Արևելեան զրույց.

ԴԱՏԱՐԿ ԽՈՍՏՈՒՄՆԵՐ

—

Վիէննայից, մի շատ հեղինակաւոր անդրադարձից ստացած նամակը ստիպում է մեզ մի քանի դառն ճշմարտութիւններ կրկնել։

Որ եւրոպական քաղաքականութեան ղեկավարը և խթանը քրիստոնէական և մարդասիրական զգացմունքները չեն, —այդ դիտեն և դիպլօմատները և հասարակ մահկանացուները։ Սակայն ներկայ դէպքում Թիւրքաց հայերը անգլիական պահպանողական մինիստրութիւնից, կամ աւելի լաւ է այդ մինիստրութեան պետից՝ լորդ Սալսբիւրիից մարդասիրութիւն և քրիստոնէական վեհ զգացմունքներ չեն աղերսում,—այլ աւելի փոքր բան, մի բան, որ իրաւունք կայ պահանջելու ոչ թէ պետական մի մարդուց, այլ նոյն իսկ հասարակ մահկանացուներից, այն է կատարել տուած խօսքը, յետ չը կանգնել հրապարակով յայտնած խոստումներից...

Ոչ գերմանական կանցլերը, ոչ ֆրանսիական արտաքին գործերի մինիստրը, ոչ աւստրիական կառավարութիւնը, ոչ Կրիսպի, և ոչ էլ Միացեալ-Նահանգների հանրապետութեան նախագահը փքուն, մեծ յոյսեր տուող, Թիւրքաց կառավարութիւնը սարսափեցնող խոստումներ չը տուեցին հայերին և ոչ էլ կատաղի շանթեր արձակեցին օսմանեան միապետի հասցէին։

Այդպէս չը վարվեց անգլիական մինիստրութիւնը։ Լորդ Սալսբիւրի, ազատամիտ մինիստրութիւնից յետոյ գործերի գլուխ անցնելով, ոչ թէ մի անգամ, այլ մի քանի անգամ բացարձակ յայտնեց, որ „Անգլիան չէ կարող թոյլ տալ, որ շարունակվեն Թիւրքական գազանութիւնները, և վերջ կը տայ այդ բոլորին, եթէ մինչև անգամ մենակ մնայ, եթէ մինչև անգամ հարկ լինի կործանել օսմանեան պետութիւնը“։

Մեծ-Բրիտանիայի առաջին մինիստրի բերանից դուրս եկած այդ խօսքերը սարսափեցին Թիւրքաց հայերին վերջնականապէս ցնցվել, իսկ Թիւրքաց կառավարութիւնը, իրան զրկված տեսնելով նախկին պաշտպաններից, մահվան և կեանքի կռիւ յայտարարեց հայ ազգաբնակութեան... Եւ ահա սկսվեց հոսել հազարաւոր մարդկանց արիւնը Հայաստանի բոլոր անկիւններում...

Եւ ինչ ենք տեսնում.—այս կրիտիկական, ծանր, սոսկալի րոպէին, երբ ամեն բան պէտք է վճռվի, Սալսբիւրին դարձնում է իր երեսը հայերից, մոռանալով իր արտասանած ճառերը, իր տուած մեծ խոստումները... Անգլիական ազատամիտ մամուլը, նոյն իսկ պահպանողական լրագիրներից շատերը բացարձակ յայտնում են, որ դա մի քաղաքական այլակերպութիւն, մի անջնջելի նախատինք է Անգլիայի համար, մի անէծք անգլիական ազգի գլխին...

Եթէ Սալսբիւրիի նման մարդը չէ կատարում իր տուած խօսքը, ինչ իրաւունքով պահանջենք, որ իր խօսքը կատարէ մի որ և է Թիւրք փաշա, կամ նոյն իսկ այլասեռված Թիւրքիան...

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱՐԵՒԵԼԵԱՆ ԶՐՈՅՑ

—

Մթնեց։ Անհաւասար էր կռիւը, նա ընկաւ և ծանր վէրքերը դեռ մլլում են նրա մարմնի վրա։

Նոր հանդստացաւ նա։ Կուրծքը չէր գործում, չունչ չունի. շուրջը ինչ աքանչելի լռութիւն է հաստատել աստեղազարդ գիշերը։ Վերկացաւ գիշերվայ մեղմ քամին. գգվեց նրա դէմքը, փաղաքշեց, զովացրեց նրա չրթունքները։ Բայց նա անկենդան էր...

Նրա անունն էր Մարդ։

Աշխարհի մի կողմից, ով գիտէ որ տեղից, անսպասելի, ինչպէս մրրիկը, և անգութ, որպէս հեղեղը, բարձրացաւ բռնութիւնը։ Եկաւ նա, ողողեց ծաղկած և խաղաղ հովիտը. և ամբողջ օրը սուրն էր կոտորում։

Աղօթարանը դեռ նոր էր կարմրում, երբ պատռվեց տարտարոսը և ամեն ինչ կլանող ալիքներ թափեց այդ փոքրիկ աշխարհը։ Ոչինչ չազատվեց։ Արիւնածարաւ Բահազը այդ օրը փառաւորվեց, կշտացաւ։ Ճեղքեցին մօր արգանդը, անժամանակ դուրս հանեցին մանուկին, ծաղրեցին, ապա կտոր-կտոր արին։ Օրօրոցները արիւնով լցվեցան։ Պատանին մօր գոգը ապաստանվեց. սուրը այդտեղ էլ հասաւ, գիտառատ գոգը սպանդանոց չինեց, ուր կուտվեցան կըտրատած անդամները. և ապա մայրը, քարացած մայրը մորթվեց անխնայ։ Երիտասարդներ, ջլոտ տղամարդիկ անչնչացան մի վայրկեանում... քանիսը, քանիսը... Սիրուն աղջիկներ, գեղեցիկ հարսներ բռնաբարվեցան ամուսինների և եղբայրների առաջ. ապա չարան-չարան կապվեցան և աւար գնացին։

Ամեն ինչ սրբեցին, խլեցին, տարան։

Հովիտը թնդում էր, հովիտը ոռնում էր։ Վերջ... սարսափելի սահման... եկել էր նա։ Կրակը յաջորդեց սրին և սկսեց լափել իր կերակուրը—միս, փայտ, շոր, հաց ու պաչար։ Եւ երբ արեգակը անցաւ սարերի ետեը, այն ժամանակ միայն վերջացաւ ահեղ օրը. և դժոխքը յետ քաշվեց, ամփոփվեց իր յաւիտենական անդունդների մէջ։

Ահա այդ ժամին, լերկ քարերի վրա արիւնալից հետքեր գծելով, փորող էր տալիս Մարդը դէպի բլուրի գագաթը։ Նա այդ հովիտից էր. երկար, շատ երկար տանջեց նրան այդ կարճ ճանապարհը։ Տեղ չը հասաւ։ Սարի լանջը ուներ մի փոքրիկ գոգ, ուր թուփերն էին գլուխ գլխի տուել։ Մեռնելու մի հանգիստ անկիւն։ Նա ընկաւ. ուռած, այլանդակված դէմքը, որի վրա արիւնը նոր էր չորանում, բութ, անզգայ մի հայեացք մնկեց երկնքի վրա, դիակի անվերջ, սարսափելի հայեացքը։

Իսկ ներքևում, հովիտի վրա, ժպտուն երկինք չէր մնացել։ Աւերակները մխում էին դեռ. և զորչ ծուխը սողում էր գետնաքարշ, խուզարկում էր ամեն անկիւն, այրեցիկ նիւթեր էր խնդրում. ապա հաւաքվում էր, խմբվում և անճոռնի կոյտերով դէպի վեր էր ոլորվում, բարձունքներն էր տանում զզուելի խանձահոտը և ծածկում էր երկնքի երեսը։ Արիւնը անքայթ իր լճերն էր պարպում. խշշալով դանդաղ ծծվում էր մայր հողի մէջ, կարմիր ցեխերով պատում էր նրա երեսը։

Հեռու մի տեղ աղետալի ոռնում են շները. դրանց է միայն խնայել կոտորածի աստուածութիւնը։ Էլ ինչ են ուզում։ Ոռնոցները հեռու և հեռու են գնում։ Իսկ աւելի և աւելի մօտենում են տեսակ-տեսակ ձայներ։ Ցաւօրինակ կենդանութիւն է սկսվել։ Լեռների լանջերի վրա շտապ վազվզող, իրարանցում. ճրագների պէս վառված աչքեր են թափառում. անցնում են ծառերի ետեը, թաքնվում են, պտոյտներ անում և ապա խմբվում են, այս ու այն կողմերից արշաւանք են սկսում դէպի թշուառ հովիտը։ Այդպէս է ճակատագիրը. սրի թողածը կրակին, կրակի պահածը գազանին։

Իսկ երկինքը վերևից նոր և նոր աստղեր է վառում...

—

Կէս գիշեր է։ Երկինք և երկիր խորհրդաւոր ժամի մէջ են։ Այժմ են նրանք միմեանց մօտենում, միմեանց խորհուրդ և դաղտնիք են յայտնում։ Ամեն երեկոյ հովիտի բնակիչները գիտէին, որ այս ժամին, երբ արթուն աչք չէ մնում երկրի վրա, բացվում են երկնքի դռները, բարի ոգիները ցած են իջնում և մտնում են մեհեանները, ուր նրանց համար պատրաստ կային յատուկ զոհեր։ Վայելելով աստուածների պարգևները, դուրս էին գնում նրանք և խաղաղութիւն, բարօրութիւն էին տարածում աշխարհի վրա, բախտ էին բերում նորածինների համար, սրբում էին որբերի արտասուքները, մեռնողին թեթևութիւն էին տալիս։ Ոչ ոք չէր տեսնում նրանց. միայն քուրմերին քնի մէջ յայտնվում էին նրանց բերած պատգամները։

Այս գիշեր ոչ մեհեան կայ, ոչ զոհ և ոչ քուրմ։ Անցնում է խորհրդաւոր ժամը. միթէ վակ են մնում երկնքի դռները։

Ահա օրօրվում են խոտերը, թիւերի թերթիկները մի մեղմ, ականջին անմատչելի սոսափիւն են սկսում։ Քամին վերևից է, կարծես գալիս է երկնքից։ Նա անդուլ անդադար քսվում է Մարդու դիակին։ Եւ կենդանութեան նշոյլներ եկան դիակի վրա։ Բացվեցան աչքերը։ Երկնքի մի աստղը, պայծառ՝ ինչպէս վառված մի խուրձ, ժպտների շողեր կաթեցրեց աչքերի մէջ։ Երկնային այդ ընծան որքան ոյժեր և որքան կարողութիւն թափեց սառած, մահացող երակների մէջ։ Կուրծքը բարձրացաւ, ներս տարաւ գիշերային զովութեան մի մեծ հոսանք, հաղորդեց թոքերին։

Եւ գիտէ նա այժմ, զգում է։ Հասկանում է իր վիճակը... բայց ինչ օգուտ։ Մահուան գիրկը... այնտեղից ոչ ոք չէ վերադառնում։ Նա այլ ևս մարդ չէ, այլ դիակ, մի անիծված, անպէտք մսակոյտ, որի մէջ շուտով կտուց կը խրէ անարդ ագռաւն անդամ։ Փտել, ոչնչանալ, մի բուռ սև հող դառնալ... գուցէ նա ունի մի, երկու խօսք, անէծքի կամ տենչանքների մի կտակ, բայց ումին ասել։ Զորս կողմը զարհուրելի լռութիւն է, ամայի, մեռած։

Եւ դուրս է գալիս մենակ, անօգնական Մարդու հառաչանքը։ Դա տանջվելով բաժանվեց ջարդված կրծքից, ծանր հեծեծալով, ողբալով սողաց, քսվեց ժայռերին, թնդաց ծերպերի խոռոչներում, կռացրեց թուփերի և մացառների գլուխը և անցաւ, անհետացաւ հեռու ձորերում։

Թռչում են բոպէները, կէս գիշերային այդ կախարդները։ Արթնութիւնը վաղանցուկ էր, իբրև երազ։ Նորից իջնում է մահուան քունը, փակվում են աչքերը։ Ահա աստղը, միակ ցաւակից լոյսը, որ ժպտում էր։ Հեռանում է նա, բարձր և բարձր է գնում, ընկնում է ինչ որ մշուշապատ ովկիանոսի մէջ։ Ալիքները յարձակվում են ամեն կողմից, բայց նա լողում է։ Ահա մի երկու ցընցուղ, ահա փայլեց ժպիտը, բայց ինչպէս կորաւ չուտ։ Մթնեց, չը կայ այլ ևս աստղ։ Արիւնաթաթախ կողերը ծանրացել են աչքերի վրա, մի ինչ որ թշչոց է լսվում ականջներում. դա աշխարհն է, որ հեռանում է շտապով։

Եւ նա ինքը գնում է այդ աշխարհից հեռու, հեռու, մի ինչ որ տեղ։ Մտնում է նա մի նոր, անծանօթ աշխարհ։ Ահռելի վէրքերը կերպարանափոխվեցան, նրանք փայլում են, նրանք հիացնում են։ Լսվում են ուրախութեան, համակրանքի ինչ որ անմեղ ձայներ։ Եւ հպարտ, գեղեցիկ է Մարդը։ Վէրքերը, տանջանքները այն աշխարհում են սպանում

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

(Ռուսաց գործակալութեան)

Բերլին, 10 դեկտեմբերի։ „Frankf. Zeit.“ հաղորդում է. „Զէյթունում փակված 400 թիւրք զինուորներ և 500 բնակիչներ, կանանցով և երեխանցով, կիրակի, կոտորվեցին նրանց պաշարող 12,000 հայերի ձեռքով։ Բ. Դուռը յայտնեց դեսպաններին, որ Մուստաֆա-փաշային հրամայված է 10,000 զինուորներով և 2 բատարէաներով յարձակումն գործել, քանդել Զէյթունն ու կոտորել հայերին“։

Կ. Պոլիս, 11 դեկտեմբերի։ Ցովային մինիստրը հրամայեց պատրաստել ճանապարհ գցելու „Ազիզիէ“ և „Օսմանիէ“ նաւերը, որոնք նշանակված են Զէյթունի ապստամբների դէմ գործելու համար։

ՕՐՎԱՑ ՀԱՐՑԸ

XL

Փոքր-Ասիայում ապրող քրիստոնեայ բոլոր համայնքներ, յոյները, աւօրիները, բողոքական և կաթոլիկ դաւանութեան պատկանողները, թէև մի փոքր ուշ, բայց հասկացան, որ Թիւրքիայում յայտարարված կռիւը միմիայն հայ-լուսաւորչականների դէմ չէ այժմ, այլ առհասարակ քրիստոնեաների դէմ։

Դրանով պէտք է բացատրել այն ուրախալի երևոյթը, որ թէ յոյները, թէ կաթոլիկ, թէ բողոքական համայնքները, որոնք մի քանի ամիս առաջ թշնամական դիրք բռնեցին դէպի հայերը՝ իրանց կաշին փրկելու համար, այժմ բոլորովին այլ կերպ են նայում հարցի վրա։—Յունաց միտրոպոլիտը Տրապիզոնի վիլայէթի մի քանի գիւղերում բաւական օգնութիւն ցոյց տուեց հայերին. Կ. Պոլսի յունաց պատրիարքը քաջութեամբ մերժեց յոյների կողմից շնորհակալութեան ուղերձ տալ՝ սուլթանին. աւօրիները ընդհանրապէս այժմ թշնամական դիրք չեն բռնել դէպի հայերը, և նրանց մի քանի կրօնաւորների «շնորհակալութեան ուղերձները» պէտք է բացատրել միայն նրանով, որ նրանք էլ ունեն այնպիսի «բարի պատուղներ», ինչպէս են մեր Աչբզեանները, Աղարեանները, և դրանց նման ստորաքարշ կղերականները։ Իսկ բողոքական և կաթոլիկ միսիոնարների վերաբերմունքը դէպի հայերը.—յայտնի փաստ է դա.—միանգամայն օրինակելի է և արժանի խորին շնորհակալութեան։

Ինչպէս երևում է, օսմանեան կառավարութեան աչքից այդ փաստն էլ չը վրիպեց, և տեսնելով, թէ ինչպէս քրիստոնեայ բոլոր համայնքները, որոնք սկզբներում թշնամական դիրք էին բռնել դէպի հայերը, այժմ, ընդհանրապէս, համակրութեամբ են վերաբերվում նրանց հարցին,—սկսեց նախկին հովանաւորութեան փոխարէն խիստ հալածանքի ենթարկել նրանց էլ, և այժմ թէ Փոքր-Ասիայում և թէ Կիլիկիայում բողոքականների, կաթոլիկների և միսիոնարների տները նոյնպէս քանդվում, աւերվում են, ինչպէս և լուսաւորչական հայերինը։

Մահմէտական կատաղի ֆանատիկոսութեան և հակա-քրիստոնէական ձգտումների դէմ ուրիշ ոչինչ չէ մնում անելու, բայց եթէ այն, որ Հայաստանի, Կիլիկիայի և առհասարակ Փոքր-Ասիայի բոլոր կողմերում ապրող քրիստոնեայ բոլոր համայնքները իրանց շահը և փրկութիւնը որոնեն ոչ թէ փոխադարձ թշնամութեան և ատելութեան մէջ, որ ձեռնտու է միայն մահմէտական թշնամուն, այլ ընդհանուր սիրոյ և համերաշխութեան մէջ, որ անհրաժեշտ է մանաւանդ ներկայ ծանր րօպէներին։

Խ. Մալումեան

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐԴԻՒՆԱԳՈՐԾՈՒԹԵԱՆ ՎՐԱ ԴՐՎՈՂ ՀԱՐԿԸ

—

Ահա մի քանի տարի է, որ կառավարական շրջաններում քննում և մշակում են մի նոր հարկ մտցնելու խնդիրը, որ, ըստ երևոյթին, պէտք է այս օրերս ստանայ իր լուծումը։ Այդ հարկը, որ պէտք է ծանրանայ արդիւնագործութեան վրա, համեմատ նրա մեծութեան, կրում է արդիւնագործութեան հարկ, промысловый налогъ անունը։ Նա պէտք է հարկատուութեան ենթարկի շատ արհեստներ և արդիւնագործութիւններ, բացառութիւն անելով միայն մանր և գիւղական արհեստագործների համար։

Ինքն ըստ ինքեան՝ արդիւնագործութեան հարկի մտցնելը չէ համարվում հարկատուութեան անհամակրելի ձև. միայն պէտք է նրա մտցնելը և իրագործելը կատարվի խելացի կերպով, որպէս զի արդիւնագործական զարգացումը չը ճնշվի հարկի անհաւասարութիւնից կամ նրա վերցնելու ձևերի անկատարելութիւնից։

Հարկատուութեան այն ձևը, որ այժմ գոյութիւն ունի, վաղուց դատապարտված է ֆինանսական շրջաններում։ Հանգուցեալ մինիստր Բունգէ իր ամենամեծ հոգսերից մէկն էր համարում փոխել այդ ձևը, բարելաւել, վերածել այնպիսի սիստեմի, որ հարկի քանակութիւնը համապատասխան լինի եկամուտին։

Ինչպէս յայտնի է, այժմ շատ արդիւնագործներ վերցնում են գիւղական վկայականներ զանազան կարգերի։ Բայց մի և նոյն գիւղիան վճարող մարդիկ ամենևին հաւասար չեն իրանց գործով և եկամուտով։ Մէկը աննշան մի եկամուտ ունի, որ հազիւ հաց նրան ապրուստ է տալիս, միւսը նոյն հարկը վճարելով, վարում է ահագին գործեր և յետ է գցում մեծ հարստութիւն։ Հասկանալի է, որ եթէ հարկատուութեան կարգը այնպէս փոխվէր, որ քիչ եկամուտ ունեցողը, մեծ եկամուտ ունեցողի հետ համեմատելով, վճարէր քիչ հարկ, դրանով փոքր ի շատէ կը թեթևանար նրա վիճակը, իսկ մեծ արդիւնագործութիւն ունեցողը կը տար համեմատ իր եկամուտին։

Անկասկած, որչափ փոքր լինի հարկի չափը, այնքան լաւ։ Եթէ կարելի լինէր բոլորովին ազատ պահել արդիւնագործութիւնները տուրքերից—դա մի մեծ դիւրութիւն կը լինէր տնտեսական զարգացման համար։ Բայց քանի որ պետական կարիքները և վճարումները նոր աղբիւրներ են որոնում տուրքի ենթարկելու համար, քանի որ հարկերի քանակութեան մեծացնելը վճռված խնդիր է համարվում, այն ժամանակ մնում է ցանկալ, որ հարկերը բաժանվեն խելացի կերպով, համապատասխան արդիւնագործողների տնտեսական այժին։ Այդ տեսակէտից՝ նոր ծրագրվող հարկային սիստեմը փոքր ի շատէ սկսում է մօտենալ հարկատուութեան այն ձևին, որ մտցրած է եւրօպական պետութիւնների մէջ, ուր հարկի ենթարկվում են ոչ թէ անձը, ոչ թէ ձեռնարկողը, ոչ թէ արդիւնագործութեան տէր ու ղեկավարը, այլ ինքը եկամուտը, ստացած շահ ու վաստակը, արդիւնագործութեան հետևանքը։

Ընտրված է յարմար սիստեմը։ Մնում է, որ իրագործութեան ձևն էլ աջող լինի և չը վնասի արդիւնագործութեան զարգացման։

ոչնչացնում։ Իսկ այստեղ... ինչ սքանչելի է այս աշխարհը։

Ցնորքները հեռացան։ Նորից բացվեց աչքը աստղեղարդ երկնքի տակ։

Նա զգաց մի տաք, սիրավառ գրկախառնութիւն։ Խաւարի մէջ մէկը խանարհվել էր նրա վրա և ուշադրութեամբ զննում էր նրա մարմինը։ Կապեց վէրքերը, սառն ջուր մօտեցրեց այրվող շրթունքներին։ Բարձրացրեց գլխի գլուխը, վախթեց, հանգստացրեց փափուկ մամուռի վրա։

Վայրկեաններ անցան. գիտառատ խնամքը հրաշքներ գործեց։ Կիսամեռ գիակը սկսեց զարմանալի արագութեամբ կենդանութիւն ստանալ։ Շուտով խօսքեր էլ դուրս եկան կործանված կրծքից։

—Ախ... ո՞վ է...

Անծանօթ խնամողը իսկոյն պատասխանեց.

—Մի թշուառ հալածական... Դու կը տեսնես նրան։

Եւ ապա շարունակեց.

—Դու այնտեղ էիր, Մարդ եղբայր, այն աշխարհում, որ ես եմ ցոյց տալիս։ Տեսայ քեզ, իմացայ քո վառ ցանկութիւնը։ Եւ եկայ քեզ մօտ։ Մենք դարձեալ նոյն դժբաղդ, անիծված երկնքի տակն ենք։

Ասում էր նա և շարունակում իր խնամքը։ Վիրակապեր էր պատրաստում, լուանում էր վէրքը։

—Ես քեզ թշուառացրի, Մարդ եղբայր, որովհետև քո կողմն էի, շարունակեց նա հառաչելով։

—Հառաչանքդ ամեն տեղ հասաւ. նա իմ միւս անունն է։ Շտապում էի քեզ ծառայելու, գուցէ դրանով քիչ քաւեմ մեղքս։

Նա նորից ջուր տուեց պապակված Մարդուն, օծեց նրա վէրքերը մի հրաշալի հեղուկով։ Եւ չէր լռում։

—Ինձ չէս անիծի, Մարդ եղբայր, նորից հարցրեց նա։

Եւ տեսնելով, որ Մարդը չէ կարողանում պատասխանել, շարունակեց.

—Օ՛, դու դեռ շատ ես թոյլ։ Կաղդուրել կարող եմ քեզ իմ պատմութիւններով։

Նա սրբեց նրա ականջները, նստեց նրա գլխի մօտ և ասեց.

—Լսի՛ր։ Ինձ անիծում են ամենքը, ամեն տեղ և ամեն ժամ։ Երէկ իրիկնապահին ձիաւոր եթովպացիներ էին անցնում մի հեռաւոր գիւղի մօտով։ Աղջիկները վերադառնում էին աղբիւրից. մէկը—անունն էր Գեղեցիկ—նայեց ձիաւորներին, և այդ բաւական էր։ Դևերը ցած իջան, խլեցին Գեղեցիկին և լիրբ հռհռոցներով շարունակեցին իրանց ճանապարհը։ Գիւղացի մի երիտասարդ տեսաւ հեռուից, իմացաւ որ իր նշանածն են փախցնում, կանչեց իր ընկերներին, վազեց դևերի ետևից։ Կռիւ եղաւ, յափշտակողները կոտորվեցան։ Բայց ինչ։ Գիւղը թափվեցան շատ եթովպացիներ, եկաւ և կուսակալը։ Դատաստան արին, բայց ինչ դատաստան. ես այնտեղ էի, մօտենում էի ատեանին, բայց ինձ գցեցին ցեխերի մէջ և ամենքը կանգնեցին ինձ վրա։ Գեղեցիկին անարգեցին, տուին խուժանին. իսկ երիտասարդների վզերին շղթաներ կապեցին և ածեցին բանտը։ Նրանք չէին մեռնում, որ ինձ անիծում էին։ Ամբողջ գիւղը անիծում էր, որովհետև կուսակալը պատիժներ թափեց և գիւղի վրա։ Լսո՞ւմ ես, Մարդ եղբայր։

Մարդը լսում էր։

—Հեռացայ տոված, արտաքսված, մեղապարտ... Ինչո՞ւ են պահում ինձ... Ինչո՞ւ աշխարհը չէ ուզում առանց ինձ մնալ։

Հառաչեց նա։ Մարդը թօթափեց իր վրա ընկած թմրութիւնը, հոգի ստացաւ։

—Ուզում եմ քեզ ճանաչել, եղբայր, ասեց նա մի հաստատ ձայնով։

—Երանի թէ չը ճանաչես, պատասխանեց անծանօթը. և շուտ տուեց երեսը, շարունակելով.

—Իմ բարեկամութիւնից ոչ ոքին և ոչ մէկին օգուտ չը կայ այս աշխարհում։

Ցանկարծ բացվեցան Մարդու աչքերը։ Նա դողաց, գալարվեց, մեծ այժ գործ դրեց, բարձրացրեց գլուխը։ Կարծես թէ մի սար էր տանում ուսերի վրա. բայց լարեց իր վերջին կարողութիւնը, պահվեց, ուժասպառ չը դառաւ։ Եւ երկար մտաղելով անծանօթ բարերարին, նա մի մեռնողի հիացմունքով բացականչեց.

—Արդարութիւն եղբայր... դո՞ւ...

—Ես եմ... ինձ ստեղծեց մեծ քրմապետը աստուածների հրամանով։ Այն օրվանից ես կենդանի նահատակ եմ...

Մարդը զլորվեց, ընկաւ նրա գիրկը...

—Դարձեալ իմ գիրկը... Ա՛հ, ո՞ւր տանեմ քեզ, ումին յանձնեմ...

Նրա ձայնը լալագին էր։ Բայց յետ մղել գիրկը չը կարողացաւ։ Այլ սեղմեց իր կրծքին, գըգվեց և քաղցր խօսքեր ասաց։

—Ա՛խ, ինչ արիր, եղբայր Արդարութիւն, հեծեծաց Մարդը, իր դէմքը թաղելով փափուկ գրկի մէջ։

Եւ պատասխանեց նա.

—Կէսօր էր դեռ, հովիտը արիւնոտող էր դառնում։ Ես հեռացայ, այլ ես իմ տեղը չէր։ Բաղխեցի շատ դռներ, մօտեցայ շատերին։ Աղերսեցի, լաց եղայ։ Բայց ես մուրացկան էի, դեռ մի աւելի լաւ օրում չեմ տեսել ինձ։ Ոչ ոք ականջ չէր դնում։ Մէկը, երկուսը ականջ դրին, բայց քեզ չեն հաւանում, Մարդ եղբայր։ Մէկը գտնում է, որ դու շատ ես տգեղ, միւսը չէ հաւատում թէ իրաւ, քո անունը Մարդ է։ Խօսեցին, վիճեցին քո արիւնի մասին. Ինչպէս է նա, կարմիր է, մաքուր է։ Դէս ու դէն ընկան, վերջը իմացան, որ դու աղքատ ես, անպէտք, ազգական ու բարեկամ չունես։ Խղճալի ես դու կրում Մարդ անունը։

—Դու խօսիր, եղբայր, ընդհատեց Մարդը։

—Գիտեմ... ես լաւ գիտեմ։ Իմ վկայութիւնը համոզիչ էր, մանրամասն։ Բայց ես մի սարսափելի բան իմացայ։ Այնտեղ լոյս է ընկել մի ուրիշ բան, որ իմ անունն է կրում. ինձ չը թողեցին, որ տեսնեմ նրան. բայց գիտեմ, գիտեմ որ նա իմ կատաղի թշնամիներից մէկն է։ Ի՞նչպէս է ծպտվել, ինչպէս է յափշտակել իմ անունը... Եւ ինչպէս զօրեղ է, մինչդեռ ես այսքան թշուառ եմ, անտուն...

Տիրեց կարճ լռութիւն։

—Արի, ձեռք վերցրու ինձանից, Մարդ եղբայր, նորից խօսք սկսեց լալկան մենաւորը։—Թշնամացիր ինձ հետ, խիստ, հեռու մղիր ինձ—և դու երջանիկ կը լինես։

Բայց Մարդը աւելի ես սկսեց գրկեց նրան։

—Երբէք չեմ դաւաճանի իմ եղբօրը, աղաղակեց նա։

Եւ բարձրացրեց իր գլուխը, ուղիղ նայեց նրա ճակատին ու արտասանեց.

—Մենք եղբայր ենք...

Այն ժամանակ բարերարը խստեց նրան, ոտքի կանգնեցրեց։

—Ես այժմվայ համար չեմ, ասաց նա։—Գնանք, եղբայր, միասին չենք կորչի։ Ես քեզ կը տանեմ գալոց օրերի առաջը։ Հեռու են նրանք, բայց մենք չենք յոգնի։

Նրանք քայլեցին։ Գիշերը երկար էր, ծանր։ Բայց նա, վերջապէս, տեղի էր տալիս. աղօտ լոյսերը մութի միջից դուրս հանեցին երկու եղբայրներին։ Մարդը վիրաւոր էր, ջլատված, թոյլ, իսկ միւսը վառ էր, նիհար, զգզված, ցեխոտ։

Ճանապարհ չը կար։ Քարեր ու մացառներ էին գալիս նրանց ոտների առաջ։ Ցգոյշ ու դանդաղ էր նրանց քայլը։

—Տեսնում ես, եղբայր, յանկարծ հարցրեց բարերարը և ցոյց տուեց երկնքի մի հեռաւոր ծայրը։

Նրա դէմքի վրա փայլեց մի երկնային ժպիտ։

Արշալոյսը վառվում էր...

Լէօ

«ԹԱԻԱՐԻ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆԸ»

Հեղ. Լ. Տօլստոյի

—

Կիրակի, դեկտեմբերի 10-ին, Թիֆլիսի արտիստական ընկերութեան բեմի վրա ներկայացվեց առաջին անգամ Թիֆլիսում Լ. Տօլստոյի «Власть тьмы» դրամայի, մի պիէսա, որի մասին թէ Եւրոպայում և թէ Ռուսաստանում մի ահագին գրականութիւն է կազմվել։

Այդ դրամայի, որի մէջ հռչակաւոր ռուս հեղինակը կամեցել է պատկերացնել, ֆոտոգրաֆիական ճշդութեամբ, ռուս գիւղական դասի, մուժիկի ներկայ բարոյական և մտաւոր վիճակը, և այն զարհուրելի խաւարը, որի մէջ նա ընկղմված է, լոյս տեսաւ 1886 թվին։ Սկզբում նա սարսափելի, ճնշող, յուսահատական ազդեցութիւն գործեց, մի կողմից առաջ բերեց սքանչացում, գովասանք, իբրև մի մեծ գեղարուեստական արտայայտութիւն և փիլիսոփայական ու հոգեբանական խորը մտքեր պարունակող գործ, իսկ միւս կողմից ենթարկվեց սաստիկ դատապարտութեան, իբրև մի անբարոյականացուցիչ, ոչ-հայրենասիրական, և խիստ պեսիմիզմ առաջ բերող և նոյն իսկ իրականութեան որ և է հիմք չը բովանդակող ստեղծագործութիւն։ Այդ պատճառով այդ գրուածքը երկար ժամանակ արգելվեց ոչ միայն ներկայացման, այլ և ընթերցանութեան համար։

Ռուսաստանում այդ պիէսան, եթէ չենք սխալվում, անցեալ տարի առաջին անգամ տրվեց Պետերբուրգում, բայց աջողութիւն չունեցաւ, սակայն Մոսկվայում նա ահագին աջողութիւն ունեցաւ, գլխաւորապէս այն պատճառով, որ ինքն, կոմս Տօլստոյ, Մոսկվա գալով, ղեկավարում էր ներկայացումը և աշխատում էր, որ բոլոր տեսարանները, պատկերները, գիւղական կեանքի նիստ ու կացը, ապրուստը, սովորութիւնները, հագուստը, լինեն ճիշդ, և պատկերացնեն այնպէս, ինչպէս գոյութիւն ունեն իրականութեան մէջ։

Թիֆլիսի արտիստական ընկերութիւնը վաղուց պատրաստվում էր այդ դրամայի ներկայացնելու։ Մենք չենք խօսի պիէսայի բովանդակութեան մասին. այդ շատ հեռու կը տանէր մեզ։ Առ այժմ այսքանը կասենք. ներկայացումը իր անսամբլի մէջ շատ թոյլ էր, անցաւ բաւական անկենդան և սառն կերպով. դերակատարները ոչնչացնում։ Իսկ այստեղ... Ինչ սքանչելի է այս աշխարհը։

Ցնորքները հեռացան։ Նորից բացվեց աչքը աստղեղարդ երկնքի տակ։

Նա զգաց մի տաք, սիրավառ գրկախառնութիւն։ Խաւարի մէջ մէկը խոնարհվել էր նրա վրա և ուշադրութեամբ զննում էր նրա մարմինը։ Կապեց վէրքերը, սառն ջուր մօտեցրեց այրվող շրթունքներին։ Բարձրացրեց գլխի գլուխը, վախթեց, հանգստացրեց փափուկ մամուռի վրա։

Վայրկեաններ անցան. գիտառատ խնամքը հրաշքներ գործեց։ Կիսամեռ գիակը սկսեց զարմանալի արագութեամբ կենդանութիւն ստանալ։ Շուտով խօսքեր էլ դուրս եկան կործանված կրծքից։

—Ախ... ո՞վ է...

Անծանօթ խնամողը իսկոյն պատասխանեց.

—Մի թշուառ հալածական... Դու կը տեսնես նրան։

Եւ ապա շարունակեց.

—Դու այնտեղ էիր, Մարդ եղբայր, այն աշխարհում, որ ես եմ ցոյց տալիս։ Տեսայ քեզ, իմացայ քո վառ ցանկութիւնը։ Եւ եկայ քեզ մօտ։ Մենք դարձեալ նոյն դժբաղդ, անիծված երկնքի տակն ենք։

Ասում էր նա և շարունակում իր խնամքը։ Վիրակապեր էր պատրաստում, լուանում էր վէրքը։

—Ես քեզ թշուառացրի, Մարդ եղբայր, որովհետև քո կողմն էի, շարունակեց նա հառաչելով։

—Հառաչանքդ ամեն տեղ հասաւ. նա իմ միւս անունն է։ Շտապում էի քեզ ծառայելու, գուցէ դրանով քիչ քաւեմ մեղքս։

Նա նորից ջուր տուեց պապակված Մարդուն, օծեց նրա վէրքերը մի հրաշալի հեղուկով։ Եւ չէր լռում։

—Ինձ չէս անիծի, Մարդ եղբայր, նորից հարցրեց նա։

Եւ տեսնելով, որ Մարդը չէ կարողանում պատասխանել, շարունակեց.

—Օ՛, դու դեռ շատ ես թոյլ։ Կաղդուրել կարող եմ քեզ իմ պատմութիւններով։

Նա սրբեց նրա ականջները, նստեց նրա գլխի մօտ և ասեց.

—Լսի՛ր։ Ինձ անիծում են ամենքը, ամեն տեղ և ամեն ժամ։ Երէկ իրիկնապահին ձիաւոր եթովպացիներ էին անցնում մի հեռաւոր գիւղի մօտով։ Աղջիկները վերադառնում էին աղբիւրից. մէկը—անունն էր Գեղեցիկ—նայեց ձիաւորներին, և այդ բաւական էր։ Դևերը ցած իջան, խլեցին Գեղեցիկին և լիրբ հռհռոցներով շարունակեցին իրանց ճանապարհը։ Գիւղացի մի երիտասարդ տեսաւ հեռուից, իմացաւ որ իր նշանածն են փախցնում, կանչեց իր ընկերներին, վազեց դևերի ետևից։ Կռիւ եղաւ, յափշտակողները կոտորվեցան։ Բայց ինչ։ Գիւղը թափվեցան շատ եթովպացիներ, եկաւ և կուսակալը։ Դատաստան արին, բայց ինչ դատաստան. ես այնտեղ էի, մօտենում էի ատեանին, բայց ինձ գցեցին ցեխերի մէջ և ամենքը կանգնեցին ինձ վրա։ Գեղեցիկին անարգեցին, տուին խուժանին. իսկ երիտասարդների վզերին շղթաներ կապեցին և ածեցին բանտը։ Նրանք չէին մեռնում, որ ինձ անիծում էին։ Ամբողջ գիւղը անիծում էր, որովհետև կուսակալը պատիժներ թափեց և գիւղի վրա։ Լսո՞ւմ ես, Մարդ եղբայր։

Մարդը լսում էր։

—Հեռացայ տոված, արտաքսված, մեղապարտ... Ինչո՞ւ են պահում ինձ... Ինչո՞ւ աշխարհը չէ ուզում առանց ինձ մնալ։

Հառաչեց նա։ Մարդը թօթափեց իր վրա ընկած թմրութիւնը, հոգի ստացաւ։

—Ուզում եմ քեզ ճանաչել, եղբայր, ասեց նա մի հաստատ ձայնով։

—Երանի թէ չը ճանաչես, պատասխանեց անծանօթը. և շուտ տուեց երեսը, շարունակելով.

—Իմ բարեկամութիւնից ոչ ոքին և ոչ մէկին օգուտ չը կայ այս աշխարհում։

Ցանկարծ բացվեցան Մարդու աչքերը։ Նա դողաց, գալարվեց, մեծ այժ գործ դրեց, բարձրացրեց գլուխը։ Կարծես թէ մի սար էր տանում ուսերի վրա. բայց լարեց իր վերջին կարողութիւնը, պահվեց, ուժասպառ չը դառաւ։ Եւ երկար մտաղելով անծանօթ բարերարին, նա մի մեռնողի հիացմունքով բացականչեց.

—Արդարութիւն եղբայր... դո՞ւ...

—Ես եմ... ինձ ստեղծեց մեծ քրմապետը աստուածների հրամանով։ Այն օրվանից ես կենդանի նահատակ եմ...

Մարդը զլորվեց, ընկաւ նրա գիրկը...

—Դարձեալ իմ գիրկը... Ա՛հ, ո՞ւր տանեմ քեզ, ումին յանձնեմ...

Նրա ձայնը լալագին էր։ Բայց յետ մղել գիրկը չը կարողացաւ։ Այլ սեղմեց իր կրծքին, գըգվեց և քաղցր խօսքեր ասաց։

—Ա՛խ, ինչ արիր, եղբայր Արդարութիւն, հեծեծաց Մարդը, իր դէմքը թաղելով փափուկ գրկի մէջ։

Եւ պատասխանեց նա.

—Կէսօր էր դեռ, հովիտը արիւնոտող էր դառնում։ Ես հեռացայ, այլ ես իմ տեղը չէր։ Բաղխեցի շատ դռներ, մօտեցայ շատերին։ Աղերսեցի, լաց եղայ։ Բայց ես մուրացկան էի, դեռ մի աւելի լաւ օրում չեմ տեսել ինձ։ Ոչ ոք ականջ չէր դնում։ Մէկը, երկուսը ականջ դրին, բայց քեզ չեն հաւանում, Մարդ եղբայր։ Մէկը գտնում է, որ դու շատ ես տգեղ, միւսը չէ հաւատում թէ իրաւ, քո անունը Մարդ է։ Խօսեցին, վիճեցին քո արիւնի մասին. Ինչպէս է նա, կարմիր է, մաքուր է։ Դէս ու դէն ընկան, վերջը իմացան, որ դու աղքատ ես, անպէտք, ազգական ու բարեկամ չունես։ Խղճալի ես դու կրում Մարդ անունը։

—Դու խօսիր, եղբայր, ընդհատեց Մարդը։

—Գիտեմ... ես լաւ գիտեմ։ Իմ վկայութիւնը համոզիչ էր, մանրամասն։ Բայց ես մի սարսափելի բան իմացայ։ Այնտեղ լոյս է ընկել մի ուրիշ բան, որ իմ անունն է կրում. ինձ չը թողեցին, որ տեսնեմ նրան. բայց գիտեմ, գիտեմ որ նա իմ կատաղի թշնամիներից մէկն է։ Ի՞նչպէս է ծպտվել, ինչպէս է յափշտակել իմ անունը... Եւ ինչպէս զօրեղ է, մինչդեռ ես այսքան թշուառ եմ, անտուն...

Տիրեց կարճ լռութիւն։

—Արի, ձեռք վերցրու ինձանից, Մարդ եղբայր, նորից խօսք սկսեց լալկան մենաւորը։—Թշնամացիր ինձ հետ, խիստ, հեռու մղիր ինձ—և դու երջանիկ կը լինես։

Բայց Մարդը աւելի ես սկսեց գրկեց նրան։

—Երբէք չեմ դաւաճանի իմ եղբօրը, աղաղակեց նա։

Եւ բարձրացրեց իր գլուխը, ուղիղ նայեց նրա ճակատին ու արտասանեց.

—Մենք եղբայր ենք...

Այն ժամանակ բարերարը խստեց նրան, ոտքի կանգնեցրեց։

—Ես այժմվայ համար չեմ, ասաց նա։—Գնանք, եղբայր, միասին չենք կորչի։ Ես քեզ կը տանեմ գալոց օրերի առաջը։ Հեռու են նրանք, բայց մենք չենք յոգնի։

Նրանք քայլեցին։ Գիշերը երկար էր, ծանր։ Բայց նա, վերջապէս, տեղի էր տալիս. աղօտ լոյսերը մութի միջից դուրս հանեցին երկու եղբայրներին։ Մարդը վիրաւոր էր, ջլատված, թոյլ, իսկ միւսը վառ էր, նիհար, զգզված, ցեխոտ։

Ճանապարհ չը կար։ Քարեր ու մացառներ էին գալիս նրանց ոտների առաջ։ Ցգոյշ ու դանդաղ էր նրանց քայլը։

—Տեսնում ես, եղբայր, յանկարծ հարցրեց բարերարը և ցոյց տուեց երկնքի մի հեռաւոր ծայրը։

Նրա դէմքի վրա փայլեց մի երկնային ժպիտ։

Արշալոյսը վառվում էր...

Լէօ

տարների միայն մի փոքր մասը, Պախսմով—Ակիմի դերում, տիկին Վէյման—Անիսայի դերում և տիկին Կարաեանի—Ակիմի կնոջ, Մատրենայի դերում լաւ էին։—Բայց և այնպէս պիէսան հէնց առաջին երկու գործողութիւնից սկսած սարսափելի ճնշող, յուսահատական տպաւորութիւն է թողնում։ «Միթէ ճիշդ է այս ամենը, ինչ որ նկարագրում է մեծ գեղարուեստագէտը. միթէ այսքան անյոյս, անմխիթար, զարհուրելի է ռուս ամբոխի կեանքը, նրա մտաւոր և բարոյական աշխարհը»—ահա հարց, որ իսկոյն ծագում է ձեր գլխում։ Այդ-տեղ, այդ աշխարհում, տիրում է խաւարի թագաւորութիւնը։ Տգիտութիւնը այնքան ծանրը է, որ մարդ կարծում է, թէ անհնարին է այդ խաւարից դուրս գալ. դարեր, ամբողջ դարեր են պէտք այդ խաւարի իշխանութիւնը մի փոքր տկարացնելու, նրա ամուր, անսասան պատերի մէջ մի փոքր անցք բանալու, որի միջից կարողանայ թափանցել լուսի մի փոքր շառաւիղ։

Եթէ «խաւարի իշխանութիւնը» դրման ծայրայեղութիւն չէ, եթէ նա նկարագրում է դառն իրականութիւն, այն ժամանակը մեծ գեղարուեստագէտը արժանի է խորին երախտագիտութեան, որ նա իր գեղարուեստական գրչով կարողանում է այնպէս ուժեղ ցնցում պատճառել և ստիպել մտածելու, թէ պէտք է պատռել այդ խաւարը...

Հ. Ա.

ՆԱՄԱԿ ԹՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, Նոյեմբերի 30-ին

Թիֆլիսի հայ լրագիրներից մէկում տպված էր, որ իբր թէ արդէն ընտրված է մի մանդատարի, որ ծրագիր է մշակել «Ռուսուցչական խնայողական դրամարկղի» համար և այդ ծրագիրը ներկայացրել է հոգևոր իշխանութեանը։

Անկասկած, գաւառական ուսուցիչները, այդ լուրը կարդալով, պիտի զարմանան, թէ այդ ինչպէս է ընտրվել մանդատարը, որ իրանք՝ ուսուցիչները տեղեկութիւն չունեն այդ մասին, և եթէ ուսուցիչները տեղեկութիւն չունեն, ապա ուրեմն ով է ընտրել մանդատարի և յանձնել նրան, որ ծրագիր մշակի։

Որքան մենք ծանօթ ենք այդ ուսուցչական դրամարկղի հարցի հետ, ներկայումս դեռ ոչ մանդատարի կայ ընտրված և ոչ էլ ծրագիր մշակած, և լրագրում տպված լուրը ոչ այլ ինչ է, եթէ ոչ մի քանի մարդկանց երևակայութեան ծնունդ, որը ուսուցչական դասակարգի կողմից ոչ վաւերական է և ոչ ընդունելի։ Այս ամառ, Թիֆլիսում հաւաքված գաւառական և տեղական չատ ուսուցիչներ խորհրդակցութիւն էին անում դրամարկղ հիմնելու մասին. բայց ժամանակի սղութեան պատճառով, ընդհանուր համաձայնութեամբ վճռվեց յետաձգել այդ հարցը մինչև միւս ամառ, իսկ ներկայ ուսումնական տարվայ ընթացքում՝ ուսուցչական խմբերը զանազան քաղաքներում պիտի աշխատեն մի մի փոքրիկ գումար ժողովելու յօգուտ ապագայ հիմնվելիք դրամարկղի։ Իսկ մանդատարով ընտրելու, ծրագիր մշակելու ոչ ոք իրաւունք չունի, առանց գաւառական ուսուցիչների խորհրդի և համաձայնութեան։ Գուցէ այդ կոչեցեալ մանդատարը ուղեցել է ղեկավար և նախաձեռնող հանդիսանալ... բայց նրա այդ բաղձանքը չի կատարվի, որովհետև ուսուցչական ընդհանուր կարծիքի և համաձայնութեան հակառակ է այդ և ինքն ըստ ինքեան մեղանչող ընկերական սկզբունքի դէմ։

Եր. Ղազարեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Դեկտեմբեր ամսի 25-ին Մոսկվայում տեղի կունենայ մի շատ կարևոր ժողով, որը նուիրված կը լինի այն հարցերի մշակութեան, որոնք կապված են արհեստներ տարածելու գործի հետ, դպրոցների միջոցով։

Մեզ հաղորդում են, որ Գանձակում արդէն տեղի է ունեցել գիւղատնտեսական ընկերութեան բաժնի բացումը։ Առաջին հանդիսաւոր նիստը կը կայանայ յունվարին։

«Տարազի» մէջ կարդում ենք հետևեալը. «Մեր ալեղարդ բանաստեղծ-վիպասան Ղազարոս Աղայեանցը օրերս Թիֆլիսից տեղափոխվելու է իր ծննդավայր Խաչէն գիւղը, ուր առ ժամանակ բնակութիւն է հաստատելու»։

Կիրակի երեկոյեան, դեկտեմբերի 10-ին, մի պարսիկ, որին, ինչպէս ասում են, պոլիցիան կամենում էր ձերբակալել, տեսնելով որ իր ետևից գալիս է մի գօրոգօվոյ և կարծելով թէ իրան կամենում է ձերբակալել, հանում է բեմվլեր և արձակում է նրա վրա։ Գօրոգօվոյն իսկոյն մեռաւ։ Սպանութիւնը տեղի ունեցաւ Քարափի թաղում։

Աստրախանից, Յովհաննէս Կիտայեանի նուիրած չորս օրինակ «Մշակը» մենք որոշեցինք ուղարկել 1896 թվին հետևեալ տեղերը. 1) Կիեվի համալսարանի հայ ուսանողներին. 2) Արզհանեան գնդի հայ զինուորներին, Դիլիջան. 3) Խանքեանդու հայոց դպրոցին, և 4) Էվլիլար գիւղի (Իգդիրի մօտ) հայոց դպրոցին։

Բագուից, Գասպար Տէր-Մարգարեան նուիրել է «Մշակի» 1896 թ. մի օրինակը Շուշու Հայոց Բարեգործական ընկերութեան դրադարանին։

Բագուից, Առաքել Ծատուրեանց, ուղարկելով մեզ 70 ռուբլի՝ «Մշակի» եօթ օրինակի բաժանորդագին, դրանցից 4 օրինակ նուիրել է. 1) Քարահունջ գիւղի դպրոցին, 2) Բռնակոթ գիւղի դպրոցին, 3) Տաթևի վանքին և 4) Ախլաթ գիւղի հայոց դպրոցին։

Ինչպէս հեռագիրը հաղորդում է, կիրակի, ամսիս 11-ին, Մոսկվայում բացվեց համառուսական գիւղատնտեսական ժողովը։ Դա երկրորդ գիւղատնտեսական ժողովն է, որ կայանում է Մոսկվայում։ Ցաւալի է, որ կովկասեան գիւղատնտեսներից ոչ ոք չէ մասնակցում այդ ժողովին։

Թիֆլիսի հայոց Հրատարակչական ընկերութիւնը լոյս է ընծայել մանկական լօտօ, բաւական չքեղ և գեղեցիկ կազմած։ Նկարները պատրաստել է Շահբազեանցի վիմագրատունը։ Լօտօի գինն է 1 ր 20 կոպէկ։ Իւրաքանչիւր նկարի անունը գրված է չորս լեզուով՝ հայերէն, ռուսերէն, վրացերէն և ֆրանսերէն։

Դեկտեմբերի 9-ին, շաբաթ օր, Թիֆլիսի ժողովարանում կայացաւ Հայոց Հրատարակչական ընկերութեան նուագահանդէսը։ Նուագահանդէսը կազմված էր երկու բաժանմունքից։ Երգչուհի Կուրօչկինա-Լիդինա bis-ին երգեց «Զայն տուր ով ծովակ»։ Վիկտորովայի ուժեղ ձայնին չատ յարմար էր Բօզնեդա օպերայից վերցրած արիան։ Հասարակութիւնը երկու անգամ բեմ հրաւիրեց նրան։ Մարչադ իր մշակված և քնքոյշ երգեցողութեան համար (Զայկովսկուց և Մասկանիից) վարձատրվեց բուռն ծափահարութիւններով։ Երգիչ Դեվիկլեր երգեց քնքոյշ և զգայմունքով։ Նա bis-ին աջող կերպով երգեց Լասինի «Այն երազ էր»։ Կրուգլով գիտէ տպաւորութիւն գործել։ Հետաքրքրական էր Գրեկովի И ночь и любовь и луна ստանաւորի երկու եղանակով երգելը։ Կուրօչկինա-Լիդինա երգեց Դավիդովի եղանակով, իսկ Դեվիկլերը Դլուսսկու եղանակով։ Դաշնամուրի վրա ածում էր Պրեսման։ Տիկին Տխօրժեվսկայա զգայմունքով կարդաց «Սպիտակ քօղ» ստանաւորը։ Պ. Դոլուխանեան՝ Մերեժկովսկու Սակիամունի։ Երեկոն անցաւ ուրախ։ Զուտ արդիւնք մնաց մօտ 700 ռուբլի։

ՅԱՐՍԿԻԷ-ԿՕԼՕԳԻԻՑ մեզ գրում են. «Համարեա մի տարի կը լինի, ինչ չրջակայ անտառներից գաղարեցրած էր թաց փայտի արտահանութիւնը։ Արա պատճառն այն էր, որ անտառապետն առաջարկել էր այստեղի բնակիչներին՝ դեսիատինաներով կտրել փայտը, փոխանակ նախկին անհաչիւ, անխնայ կտրելը, նպատակ ունենալով այսպիսով ապագայում նոր անտառներ առաջ բերել։ Սակայն տեղացի բնակիչներին ձեռնտու չէին համարել այդ պայմանը։ Վերջապէս, երկար բանակցութիւններից յետոյ, դեկտեմբերի 5-ին կայացած աճուրդով՝ այժ ստացաւ անտառ կտրելու նոր սիստէմը»։

ԽԱՐԿՕՎԻՑ, ուսանող Գէորգ Լազարեան խընդրում է մեզ ապագրել հետևեալը. «Մշակի» 138-րդ համարում յայտարարված էր, որ ռուսերէնից թարգմանվում է «Гнѣздо», հեղինակութիւն, Ախչարումովայի։ Պատիւ ունեմ յայտնելու, որ Խարկովի հայ ուսանողական ընկերութիւնը արդէն պատրաստ ունի վերոյիշեալ գրքոյկի հայերէն թարգմանութիւնը և այս օրերս յանձնել է տպագրութեան»։

ՇԱՄԱԽՈՒՑ մեզ գրում են. «Նոյեմբերի 27-ին հեռագիրը այստեղ լուր բերեց, թէ՝ Զավադի գաւառում, Արաբ-Բալօղլանլու կոչված թուրք գիւղում երեք հայ են սպանվել՝ երկու եղբայրը և նրանց հօրեղբայրը։ Այդ դէպքը պատահել է այսպէս։ Նոյեմբերի 26-ի գիշերը, ժամի 11½-ին, սպանվածներին ծանօթ մի թուրք գալիս է նրանց խանութը, և դուռը ծեծելով՝ խնդրում է բաց անել. երբ բաց են անում, թուրքը ներս է մտնում խանութ. նրան հետևում են ուրիշ չատ թուրքեր, զինված հրացաններով։ Խանութ ներս մտնելով՝ սկսում են գնդակահարել և երեքին էլ սպանում են։ Սպանելուց յետոյ խանութի բոլոր իրերը հաւաքում ու տանում են։ Սպանվածները տասը տարուց աւելի էր, որ այնտեղ վաճառականութեամբ էին պարապվում»։

ԻԳԴԻՐԻՑ մեզ գրում են. «Ալաշկերտից ստացվեց հետևեալ լուրը. «Մուսունի ռէս Յարօի որդին անից դուրս է եկել դաշտ գնալու համար. մի երկու զինուոր այդ միջոցին վէճի են բռնված եղել այն մասին, թէ ո՞վ է իրանցից հմուտ հրացան արձակողը և որոշում են իրանց հմտութիւնը փորձել թշուառ երիտասարդի վրա. թիւրք զինուորի համար ինչ արժէ մի հայը. գնտակն արձակվել է և ռէսի որդին անկենդան գետին գլորվել։»

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՅՈՑ ՀԱՐՑԸ ԵՒ ԴԻՊԼՕՄԱՏԻԱ

Սօլսբիւրիի խոստումնազանցութիւնը

Լօնդօնից, դեկտեմբերի 5-ից հեռագրում են «Новое. Время» լրագրին հետևեալը. «Մարկիզ Սօլսբիւրին ոչ միայն հրաժարվեց ընդունել բրիտանական հայասէրների պատգամաւորութիւնը, որին գլուխ էր կանգնած Ուէստմինստէրեան դուքսը, բայց պահանջեց, որ ճնշում գործ դրվի և միջոցներ ձեռք առնվեն յետաձգելու, անորոշ ժամանակով, այն մեծ միտինգը, որը կազմվում էր դքսի հովանաւորութեան տակ և Գլադստոնի ներկայութեամբ։ Ազատամիտ բանակի բոլոր լրագիրները և պահպանողականների չատ օրգաններ խիստ կերպով յարձակվում են լորդ Սօլսբիւրիի վրա՝ նրա դաւաճանութեան համար։ Կանոնիկոս Գօրի մի քարոզ խօսեց Ուէստմինստէրեան Աբբայութեան մէջ, որի մէջ յայտնեց, թէ Անգլիան անէծքների արժանի կը լինի, եթէ անպատիւ կը թողնի նրանց, որոնց խոստացաւ իր հովանաւորութիւնը»։

Երկրորդ պահանջները

«Daily Chronicle» լրագիրն ասում է. «Պ. Նէլիդով բանակցեց սուլթանի հետ և մէկ ժամում աջողեցրեց այն, ինչ բանի մասին մնացած դեսպանները իզուր աշխատում էին ամբողջ երկու շաբաթ շարունակ։ Այդ պարզ փաստը ցոյց տուեց, թէ որտեղ է գտնվում իշխանութեան յենակէտը, մի և նոյն ժամանակ մատնացոյց արաւ այն անձի վրա, որը պատասխանատու է այս բոլոր ձգձգումների համար։ Եթէ որ ռուսաց դեսպանը պահանջէր տեսակցութիւն սուլթանի հետ տասս օր առաջ, տեղի չէր ունենայ այն խայտառակութիւնը, որ հետևանք էր երկար սպասելուն։ Ինչու նա այդպէս չը վարվեց։ Ի՞նչ պատահեց այդ ժամանակ, որ ստիպեց Ռուսաստանին ասպարէզ գալ։ Արդեօք այն չէ՞ որ, ինչպէս հաւատացնում էր իտալական մամուլը, Անգլիան տեսնելով, որ պետութիւնները չեն վըստահանում միաբան գործել, վճռեց գործել միայնակ։ Յամենայն դէպս, պետութիւնների տարած յաղթութիւնը Կ. Պոլսում բաւական ողորմելի յաղթութիւն է»։

Անգլիական նոր փոխ-հիւպատոսներ

Վանում և Սիվասում նշանակվել են նոր փոխ-հիւպատոսներ—մայոր Վիլլիամս և Ֆիլիպ Բեօլման։ Մայոր Վիլլիամս նշանակված է Հալվարդի տեղ, որը փոխադրված է Դիարբէքիր։ Որոշված է նոյնպէս մի նոր փոխ-հիւպատոսութիւն հաստատել Խարբերդում և լրացնել հիւպատոսների թիւը այն վեց վիլայէթներում, որտեղ պէտք է բէֆօրմներ (??) մտցնվեն։

Սուլթանի թիկնապահները

Կ. Պոլսից, նոյեմբերի 27-ից, հեռագրում են, որ Կ. Պոլսից փախած բազմաթիւ բարձրաստիճան պաշտօնեաների և սպաների թեռում գտնվում են Հասան-Ջամի-փաշան և Իզզէթ-փաշան, երկուսն էլ սուլթանի թիկնապահները։

Ֆրանսիական համակրութիւն

Ֆրանսիական «Correspondence» հանդիսի մէջ տպված է մի մեծ յօդուած «Հայաստանի գործերը» վերնագրով։ Համառօտ կերպով բացատրելով Հայաստանի հին պատմութիւնը, յօդուածագիրը երկարօրէն կանգ է առնում հայ ազգի այժմեան վիճակի վրա, նկարագրում է հայերի վատ և լաւ կողմերը, պակասութիւնները և արժանաւորութիւնները և յորդոր է կարդում թոյլ չը տալ, որ այդպիսի մի կուլտուրական ազգ բնաջինջ լինի։

Հայկանայք Տրապիզոնում

Մեզ հաղորդում են հետևեալը. «Ամսէ երեք շաբաթ առաջ, Տրապիզոնում, մի խումբ կիներ, տեղւոյն կառավարութեան աղերսագիր մատուցին սա իմաստով թէ՝ մեռնողը մեռաւ, ողջ մնացողներն ալ բանտն էք դրեր, այս ինչ է մեր քաշածը. դռներնիս բացող հաց բերող մը չունինք, բանտարկեալներն արձակեցէք կամ մեզի հաց տուէք...

«Տարակոյս չը կայ, թէ խնդիրքը անլսելի մնաց։

«Տրապիզոնի Սիւրմէնէ կոչված գիւղում սպանուել են չորս հոգի նորերում»։

ՆԱՄԱԿ ԹԻԹՐԻԱՅԻՑ

Կ. Պոլիս, նոյեմբերի 28-ին

Խոր, բայց սպառնալից հանդարտութիւն մը կը տիրէ Պոլիս. թիւրք չրջանակներու մէջ տիրող կարծիքները ենթադրել կուտան, թէ մօտերս իրենց մէջ թերևս մեծ դէպքեր պատահին և հիմնական փոփոխութիւն մը երևան գայ։ Թէև թիւրքերու հայրենասիրութեան, խելացիութեան վրա նպաստաւոր գաղափար մը չունինք, բայց երկիրը հասած է այնպիսի վիճակի մը, որ նոյն իսկ իրենք ալ տակալու կարող չեն։ Աղքատութիւնը ամեն դասակարգի մէջ վերին աստիճանին հասած է. սուլթանին քաղաքականութեանը չնորհիւ օտար միջամտութիւնը անխուսափելի կերևի. նաւատորմները կը սպասեն Ցարտանելի՝ բերանը։ Կերևի թէ ներքին տագնապին վտանգը մեծ ըլլալու է, որովհետև զրոյց կայ թէ Սուլթանը օսմանեան սահմանադրութիւնը վերահաստատելու միտք ունի։

Սաիտ-փաշային փախուստը ծանր հարուած մը եղաւ Եըլդզի պալատին. ներքին բոլոր կացութիւնը մէջտեղ հանեց։ Սաիտ ազդեցիկ մարդ էր. հին թիւրքերուն յոյսը իր վրա էր. սուլթանին վրա ալ ներգործող էր, և ահա ասանկ մարդ մը իսկ կը հարկադրուի օտար դեսպանատուն մը ապաստանիլ իր կեանքը փրկելու համար. ինչո՞ւ այդ վտանգը. վասն զի Սաիտ թիւրքիոյ համար բարեկարգութեան մը պէտքը տեսած է, իր ըմբռնած եղանակին համեմատ։ Այդ վտանգը որ կը սպառնայ նախկին սատրազամի մը, արդեօք բաւական չէ՞ ցոյց տալու համար թէ հոս Եըլդզի չրջանակներուն մէջ «բարենորոգումի» գաղափարին դէմ ինչ թշնամութիւն կայ. եթէ այսպէս թիւրքերուն համար, ուր մնաց հայերուն համար։

Սաիտ սակայն երէկ գիշեր իր բնակարանը վերադարձաւ։ Այդ գայթակղական փախուստէն ետքը այդ գայթակղական վերադարձին չէր ըսպասուեր։ Բայց կերևի թէ դեսպանները ապահովութիւն տուած են, թէ իրեն վտանգ մը պիտի չի ծագի։

Սաիտ վերադառնալու համար պայման դրած է, որ զինքը քննութեան չի կանչեն, զինքը չի նեղեն, եթէ Պոլիս կամ դաւառները իրեն պաշտօն տրուի, առանց իր հաճութեանը չըլլայ, իր ամսականը կանոնաւորապէս Պանք օթոմանէն ստանայ։ Այս պայմաններու մասին երաշխաւորութիւն ընդունելով դեսպաններէն, վերադարձաւ բնակարանը իր զաւկին հետ։ Թերևս

այն համոզումն ալ ունի, թէ քիչ օրէն իրերու վիճակը կը փոխուի, ինք ան ատեն պէտ մը կըլլայ. պէտք չէ որ այդ միջոցին դեսպանատան մը մէջ փակուած դտնուի։ Երդ արդեօք այս ամենն։

—

Մինչ այս երազը կը տեսնուի, կամ չատերուն նայելով այս իրականութիւնը կը պատրաստուի, անդին վեց պետութիւններու նաւերը Վոսփոր մտնելու խնդիրն ալ քայլ մը կը յառաջանայ։ Դեսպաններ վերջնական պատասխանի մը համար պայմանաժամ մը տուած էին. երէկ լրացաւ. դեռ պատասխան չի կայ. եթէ այսօր ալ պատասխան չի տրուի, պետութիւնները վերջնագիր մը պիտի տան, անկէ ետքը գործադրութիւն։ Ցեմանք։

Սուլթանը անձնապէս շատ կը վախնայ նաւատորմէ, ոչ միայն օտար նաւերէն, այլ նոյն իսկ թրքականներէն։ Այսօր Թիւրքիա մարտանաւ չունի, զուրկ է պատերազմական նաւատորմէ։ Ի՞նչու. վասն զի սուլթանը կը վախնայ, որ մարտանաւերը կրնան Վոսփորի մէջ շարուիլ և թնդանօթները ուղղել Եըլդիզ պալատին վրայ, և ահա այս վախէն բոլոր մարտանաւերը զրեթէ փճացուց. մէկ քանին Ոսկեղջիւր քաշել տուաւ, մեքենաները հանեց, որպէս զի չի կրնան շարժիլ։ Սուլթան Ազիզի օրով ամեն գարնան զրահաւորները կը շարուէին Վոսփոր, կերթային երբեմն փորձեր ընել Մարմարա. հիմա ոչինչ։ Արդ ինչ սպառնանք սուլթանին համար, երբ վեց օտար մարտանաւ շարուին Վոսփոր, մանաւանդ այս պահուս։ Բայց մեր յոյսն ալ այդ մարտանաւերուն վրա է. և այդ յոյսին պատճառաւ է, որ Պոլսոյ հայերը հանդարտօրէն կը սպասեն։ Ցուսահատութիւնը ծայրայեղութեան պիտի մղէ պոլսեցիները։

—

Մեր շրջանակներուն մէջ կարեւոր մեծ բան մը չի կայ։ Պատրիարքը վերադարձաւ պատրիարքարան, անցաւ Նորէն գործի գլուխ. կը լսենք թէ ամենածանր շրջաբերական մը կը պատրաստէ բոլոր վերջին կոտորածներուն վրա, և պիտի ղրկէ դեսպաններուն։ Երէկ ալ, կարծեմ, Իտալիոյ դեսպանատունը գացած է նոր դեսպան պ. Բանսաի գալուստը շնորհաւորելու. սեպտեմբեր 18-էն ի վեր այս առաջին այցելութիւնն է, որ կուտայ դեսպանի մը։

Հայաստանէն կը հասնին նորէն երախտագիտական գրերը. ալ ծիծաղելի եղած են. ամբողջ Եւրոպա կը խնդայ այս ծանծաղամիտ քաղաքականութեան վրա։ Գաղափար մը տալու համար քանի մը հատ ղրկած եմ. ալ աւելորդ է շարունակել առաքումը։

Եւրոպական թերթերը հրատարակեցին թէ սուրիացի կաթոլիկներ Հայաստանի կուսակալներուն փոխանորդներ կարգուեր են։ Թողունք որ այս կարգադրութիւնները, այս տեսակ բարեկարգութիւնները մեզի համար նշանակութիւն չունին այլ ես, բայց եթէ ունենան իսկ, այդ նշանակուած սուրիացիները այնքան ողորմելի ոչնչութիւններ են, որ ամենէն բարեկարգ երկիրն իսկ խանգարելու չափ տխմար են։ Ու այս ամենուն վրա այդ անուանումներն ալ ետ մնացին։ Մէկ ժամուան որոշումը կը փոխուի միւս ժամը։

***

„ՄՇԱԿԻ" ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՍ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

ՎԱՇԻՆԳՏՈՆ, 7 դեկտեմբերի։ Արտաքին գործերի սենատական յանձնաժողովը, որին յանձնուած էր քննութեան առնել Կլիվլենդի գրութիւնը Վենեցուէլական հարցի առիթով, վճռեց՝ չը նայելով ծնդեան ատներին, չընդհատել պարապմունքները։ Քննելով այդ հարցը. հանրապետականները և դէմոկրատները միացան՝ վճռելով միաբան պաշտպանել կառավարութիւնը։ Սենատին առաջարկուած է մի նախագիծ՝ Միացեալ Նահանգների պատերազմական պատրաստութիւնները ուժեղացնելու համար։ Առաջարկուած է 100 միլիոն դոլլարի կրեդիտ մէկ միլիոն հետեւակ զօրք պատրաստելու համար. պահանջուում է նոյնպէս 1000 թնդանօթներ և 5000 ամրոցային թնդանօթներ։ Օրինագիծը յանձնուեց զինուորական գործերի մանաժողովին, որը միաձայն ընդունեց։ Այդ պատճառով նախագահը լիազօրութիւն ստացաւ յանձնաժողով ընտրել Վենեցուէլայի սահմանները հաստատելու համար, և 100 հազար դոլլար կրեդիտ նշանակուեց այդ յանձնաժողովի ծախսերը ծածկելու համար։

ԲԵՐԼԻՆ, 8 դեկտեմբերի։ Գերմանական լրագիրները պախարակում են Կլիվլէնդի, Միացեալ Նահանգների և մասնաւորապէս Մոնրոյի դոկտրինը և յանդիմանում են նրանց՝ որ իզուր աղմուկ և իրարանցում են գցում. Միացեալ-Նահանգների պատերազմը Անգլիայի հետ անհաւանական է երեւում։

Կ. ՊՕԼԻՍ, 8 դեկտեմբերի։ Սուլթանի իրաւէն ծովային մինիստրին հրամանագրում է, որպէս զի «Օսմանիէ» և «Ազիզիէ» զրահակիր նաւերը և երկու ականաս նաւեր խարիսխ գցած մնան պահականաւերի մօտ։ Այդ նաւերի սպառազինումն արդէն սկսած է։

ԼՕՆԴՕՆ, դեկտեմբերի։ Կ. Պոլսից «Times» լրագրի ստացած տեղեկութիւնների համեմատ, մինիստրները հրաւիրուեցին պալատ՝ միջոցներ գտնելու համար օգնել ֆինանսական ստիպողական կարիքներին։ Դանձարանը կատարեալ դատարկ է։ Օսմանեան բանկը մերժում է մինչև անգամ փոքր առանները։

ԼՕՆԴՕՆ, 8 դեկտեմբերի։ Պաշտօնական երեկոյթին արտաքին գործերի մինիստրութեան մէջ մեծ ապաւորութիւն գործեց Միացեալ—Նահանգների դեսպանի բացակայութիւնը։ Անգլիական լրագիրները սաստիկ կարճացրել են լեզուն և խօսում են յոգուտ բարեկամութեան պահպանութեան երկու արիւնակից ազգերի մէջ։ Դիպլոմատական շրջաններում կարծում են, որ Անգլիան զիջումներ կանի։ Այստեղ ստացուող բոլոր լրագիրները հաստատում են նախագահ Կլիվլէնդի գրութեան անգին աջողութիւնը։ Նրա ժողովրդականութիւնը Ամերիկայում սաստիկ աճում է։ Հաւանական է, որ նա կրկին նախագահ կընտրուի, որովհետև կարողացաւ գոհացնել ամերիկացիների ձգտմանը—զգայնել տալ Ամերիկայից դուրս Միացեալ-Նահանգների ազգային զօրութիւնը։

ԼՕՆԴՕՆ, 8 դեկտեմբերի։ Սոլսբիւրին բանակցութիւններ սկսեց եւրոպական կառավարութիւնների հետ՝ Մօնրոէի սկզբունքի հարցի առիթով, որի վրա մատնացոյց է անում Կլիվլէնդ։

ԼՕՆԴՕՆ, 8 դեկտեմբերի։ «Times» հաղորդում է, որ Հիւսիսային Ամերիկայի բոլոր չասակների նահանգապետները, բացի երկուսից, համակրութիւն յայտնեցին նախագահի քաղաքականութեանը։ Նիւ-Եօրկի զեկավարող բանկային շրջաններում հաւատացնում են, որ նախագահի գործունէութեան եղանակը շատ կորստաբեր կերպով է ազդում գործերի վրա։

ՄՕՍԿՎԱ, 10 դեկտեմբերի։ Այսօր տեղի ունեցաւ գիւղատնտեսական համագումար ժողովի բացումը։

ՊԱՐԻԶ, 10 դեկտեմբերի, Վիլլաֆրանկից հաղորդում են, որ դեկտեմբերի 9-ին այնտեղ հասաւ չոգենաւով Թագաժառանգ Յէսարեվիչը։ Յամաք դուրս գալով, Նորին Բարձրութիւնը գնաց Տիւրբի։

—

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՈՐՍԱ

Դեկտեմբերի 8-ին

Լօնդոնի վրա 10 ֆունտ արժէ . .	93 ր.	40 կ.
Բերլինի վրա 100 մարկ — . .	— »	— »
Փարիզի վրա 100 ֆրանկ — . .	36 »	90 »
Ոսկի — — արժէ . .	7 »	45 »
Մաքսային կուպոններ — . .	149 »	— »
Արծաթ — — — . .	— »	— »
Բօրսային դիսկօնտ — . .	$6\frac{1}{2}$	$7\frac{1}{2}$%
4% պետական բէնտա	$98\frac{1}{8}$ »	— »
5% ոսկեայ բէնտա 1884 թ. . .	— »	— »
Ներքին 5% առաջին փոխառութ.	$281\frac{3}{4}$ »	— »
— — երկրորդ —	236 »	—
5% գրաւ. թղթ. ազն. կալ. բանկի	205 »	— »
5% պետական երկաթուղ. բէնտա.	100 »	50
4% ներքին փոխառութեան . . .	$97\frac{1}{2}$ »	— »
$4\frac{1}{2}$% գրաւ. թղթ. ազն. կալ. բանկի	100 »	— »
Ազն. կալ. Պետ. բանկի խաղարկութ.		
$4\frac{1}{2}$% վկայակ. գիւղ. հող. բանկի	100 »	— »
Փոխ. կրեդիտ. ընկեր. մետաչ.	151 »	— »
Պետերբուրգի քաղաքային կրեդիտ. ընկերութեան օրլիգացիաները.	$100\frac{1}{4}$ »	— »
Մոսկվայի քաղաք. օրլիգացիաներ.	100 »	25 »
Օդեսայի — —	100 »	— »
Թիֆլիսի — —	98 »	— »

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԸ ՅԱՅՏՆՈՒՄ Է

—

ԹԻՖԼԻՍ Գլուա քահանայ Աղանեան. Ստացանք Ասխաբադից, Հայրապետ Տէրտէրեանից 15 ռուբլի, ձեզ յանձնելու համար։ Բարեհաճեցէք ստանալ։

ԵՑՍԿ Մ. Ն. Ձեզանից միայն մի թղթակցութիւն ենք ստացել։ Շարունակեցէք։ Ինչ որ հնար է, ուրախութեամբ կը տպագրենք։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ

Հրատարակիչ՝ ԱՆԴՐԷԱՍ ԱՐԾՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Բ. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆԻ

(Կուկիա, Վօրոնցովի արձանի հանդէպ)

Հիւանդներին ընդունում են ամեն օր, բացի կիրակի օրերից։

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ՝

Բ. Ա. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան, սիֆիլիս և վեներական հիւանդութիւնների։

Դ. Գ. ՉԻԿՈՎԱՆԻ—9—10 ժ. աչքի, ներքին և նեարդային հ.

Կին-բժիշկ ԴՈՒՆԱՅԵՎԱ-ՐՈՒԴԵՆԿՈ—10—11 ժ. կանանց և երեխ. հ.

Ի. Ֆ. ՊՐՕՏԱՍԵՎԻՉ—12—1 ժ. ականջի, կոկորդի, քթի և կրծքի հ. երկուշաբթի, չորեքշաբթի և ուրբաթ։

Ա. Մ. ՓՈՒՂԻՆԵԱՆ—12—1 ժ. ներքին, երեխայոց և նեարդային հ. երեքշաբթի, հինգշաբթի և շաբաթ։

Ա. Գ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—1—$1\frac{1}{2}$ ժ. ներքին և երեխայոց հ.

ԵՐԵԿՈՆԵՐԸ՝

ՊՐՕՏԱՍԵՎԻՉ—5—6 ժ. երեքշ. հինգշ. և շաբաթ։

Ա. Մ. ՓՈՒՂԻՆԵԱՆ—5—6 ժ. երկուշաբթի, չորեքշաբթի և ուրբաթ։

Ա. Գ. ԳՈՒՐԿՕ—6—7 ժ. Սիֆիլիսի, մէզի և սեռական օրգանների հ. ներքին և մարթի հ.

Ա. Գ. ԳՈՒՐԿՕ քիմիական և խոշորացուցական հետազօտութիւններ է անում մէզի, խելի, արեան, կաթի և այլն։

Վճար 50 կ.։ Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։

Հիւանդանոցի վերատեսուչ՝

բժշկապետ ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ

Լոյս տեսաւ

ՍԱՍՈՒՆ

Աշխատութիւն Ա. ՔԱԼԱՆԹԱՐԻ

(Երկրորդ տպագրութիւն)

Արտատպված «Մշակ» լրագրից

ԳԻՆԸ 20 ԿՕՊ.

Վաճառվում է կենտրոնական գրավաճառանոցում։

(№ 141) 3—5

ԲԺՇԿԱԿԱՆ ԸՆԴՈՒՆԱՐԱՆ

ԴՕԿՏ. Ա. ԲԱԲԱՑԵԱՆԻ

Սերգիեվսկայա փողոց № 14.

Ցերեկը 2—3 ժ. կանայք և մանուկներ։

Երեկոյեան 6—$7\frac{1}{2}$ ժ. տղաղդիկ։

—

Ներքին և ջղային հիւանդների համար, բացի դեղերից, գործադրվում են նաև զանազան տեսակ ջրա-էլեքտրա-բուժական և այլ ֆիզիկական մեթոդներ (մասաժ և այլն)

(№ 124) 15—20

ԱՏԱՄՆԱԲՈՒԺԱՐԱՆ

Մ. Գ. ՀԵՋՈՒԲԵԱՆԻ

(Գօլովինսկի պրոսպեկտ, տուն Անանովի, Նոր Թատրոնի դէմ)

ՀԻՒԱՆԴՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆ առաւօտեան 9 ժամից մինչև 6 ժամ երեկոյեան։ Բժշկում է ատամները, պլոմբ է անում և դնում է արհեստական ատամներ։

(№ 133) 7—30

ՄԱՆԿԱԿԱՆ ԽԱՂԵՐ

ժողովեց

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԲԱՐԽՈՒԴԱՐԵԱՆ

ԳԻՆՆ Է 50 ԿՕՊ.

Վաճառվում է կենտրոնական գրավաճառանոցում։ (№ 138) 6—9

ԲԺՇԿԱՊԵՏ

Ե. Ա. ՖՐԱՆՑԻՈՒՍ

տեղափոխվեց Վելիամինովկայա փողոցը տ. № 14. Քաղաքային Դումայի հանդէպ։

ԱԿԱՆՋԻ, ՔԹԻ և ԿՈԿՈՐԴԻ հիւանդութիւններ ունեցող հիւանդների ընդունելութիւնը տեղի է ունենում 5—7 ժամ երեկոյեան։

(№ 106) 19—20

ՆԵՐՍԻՍԵԱՆ ՀԱՅՈՑ ՀՈԳԵՒՈՐ ԴՊՐՈՑԻ

Հոգաբարձական խորհրդում դեկտեմբերի 13-ին, 1895 ամի, երեկոյեան ժամի 8-ին, նշանակված է ԱՃԾՐԱԽՕՍՈՒԹԻՒՆ կապալով տալու երեք տարի և տասն և մէկ ամիս ժամանակով 1-ից փետրվարի 1896 ամի, 18 կրպակներ նկուղներով։ Այդ կալուածքը գտնվում է քաղաքիս III մասում, Սօլդատսկի բազարում, Կուզնեչնի փողոցում։ Այժմ ստացվում է կապալավարձ 2,200 ր. տարին։ Պայմանագիրը կարելի է տեսնել հոգաբարձական դիւանատան մէջ ամեն օր, բացի կիրակի և տօն օրերից, ցերեկվայ 10—2 ժամը։ 1—1

ԿԵՆՏՐՕՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ

Առաջիկայ Ծննդեան տօների պարգևների համար պատրաստված են մեծ քանակութեամբ հայերէն և ռուսերէն փառակազմ գրքեր։ Այդ գրքերի անուանական ցուցակը, բացի գրավաճառանոցի լիակատար ցուցակներից, որոնք ձրի են բաժանվում, հայերէնը տպվում է «Արծագանքում», իսկ ռուսերէնը «Кавказъ»-ում։ Նոյն տեղը բաժանորդագրութիւն է բացված տեղական և օտար երկրեայ բոլոր պարբերական հրատարակութիւնների համար։ Մինչև յունվար բաժանորդ գրվողները օտարերկրեայ հրատարակութիւնների համար ճանապարհի ծախս չեն վճարում։

(№ 142) (ա. ա.) 2—10

1895 թ. նոյեմբերի 10-ից ստացվել է ՊԱՍՏԵՕՐԻ ՍԻՍՏԵՄՈՎ պատրաստած

ԲՐՈՒՍԱՅԻ ԲՕԺՕՃԻ ՍՊԻՏԱԿ ՏԵՍԱԿԻ ՍԵՐՄԸ

որ արդէն անցեալ տարիներից յայտնի է Կովկասում և Պարսկաստանում իր յատկութիւններով, և տուած առատ բերքով, „ԷԿՕՆՕՄԻԴԷՍ" ֆիրմայից։

Ցանկացողները կարող են պահանջել Թիֆլիսի Շերամապահութեան կայարանում՝ քննելուց յետոյ։

Գնել ցանկացողները կարող են դիմել՝ ԲԱԹՈՒՄ, ԹԻՖԼԻՍ, ԲԱԳՈՒ, ԵՂ. ՄՆԱՑԱԿԱՆԵԱՆՑՆԵՐԻՆ, իսկ ՆՈՒԻԻ՝ Աղա Մուսայ Մահմէդովին։

Այս հասցէով. Брат. МНАЦАКАНЯНЦЪ, БАТУМЪ կամ ТИФЛИСЪ կամ БАКУ.

(№ 138) (Ե. չ.) 4—24

ՀԱՅ ԳՈՐԾԻՉՆԵՐԻ ՊԱՏԿԵՐՆԵՐԸ

Լուսանկար Տէր-Ղևոնդեանի մօտ վաճառվում են հետեւեալ հայ գործիչների պատկերները՝

Հոգևորականներ.—հինգերորդ դարու գործիչներից՝ ՍԱՀԱԿԻ և ՄԵՍՐՈՊԻ։ Ժամանակակիցներից՝ ՆԵՐՍԷՍ V, ԳԷՈՐԳ IV, ՄԱԿԱՐ և ՄԿՐՏԻՉ կաթողիկոսների, ԳՐԻԳՈՐԻՍ ԱԼԷԱԹՃԵԱՆԻ (կաթողիկոս Կիլիկիայի), ՄԱՏԹԷՈՍ ՊԱՏՐԻԱՐՔ ԻԶՄԻՐԼԵԱՆԻ, ԱՐԻՍՏԱԿԷՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՍԵԳՐԱԿԵԱՆԻ, ԽՈՐԷՆ ՆԱՐՊԷՅԻ և ուրիշ արժանաւոր հոգևորականների։

Նոյն տեղը վաճառվում են.—ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆՈՒ, ՐԱՖՖԻ, ՌԱՖԱՅԵԼ ՊԱՏԿԱՆԵԱՆԻ, ԾԵՐԵՆՑԻ, ՍՏԵՓԱՆՆՈՍ ՆԱԶԱՐԵԱՆՑԻ, Ց. ՊԱՐՈՆԵԱՆԻ, Գ. ԱԴԱՄԵԱՆԻ (բոլոր դերերում նկարված), ԽՄԲԱԳԻՐՆԵՐԻ, կենդանի ԳՐՈՂՆԵՐԻ, նշանաւոր հայ ԿԱՆԱՆՑ՝ Ս. ՏԻՒՍԱԲԻ, ՄԱՐԻԱՄ ՄԷԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ-ԱՐԾՐՈՒՆՈՒ, «ՄՇԱԿԻ» ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ յօբելեանական ալբոմը, նմանապէս ուրիշ զանազան գործիչների լուսանկարները։

Վերոյիշեալ պատկերները արժեն՝ մեծագիր 3 ռուբլի, ՄԻԶԱԿ ՊԱՏԿԵՐՆԵՐԸ 1 ռուբլի, ԿԱԲԻՆԷՏԱՅԻՆ կոչված պատկերները՝ 40 կոպէկ, ՎԻԶԻՏ կոչված պատկերները՝ 20 կոպէկ։

Հասցէն՝ ТИФЛИСЪ. Фотографія Теръ-Гевондянца (На Михайловск. мосту). Ճանապարհածախսը գնողի վրա է։ (№ 117) 3—10

Дозволено цензурою, Тифлисъ, 11 Декабря 1895 г. Типографія Канцел. Главнонач. Гражданск. частью на Кавказѣ, Лорисъ-Меликовская ул., д. каз.